ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

LOGISTICS SUPPORT DEPARTMENT OF
MINISTRY OF DEFENCE OF THE
REPUBLIC OF ARMENIA
**ДЕПАРТАМЕНТ МАТЕРИАЛЬНО-
ТЕХНИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
Email :depart@mil.am
Հեռ. (+37410) 29-45-45
Ֆաքս. (+37410) 29-46 13

5 Bagrevand str.,0044 Yerevan
Ереван, 0044, Багревант 5,
Email: depart@mil.am
Tel.Тел. (+37410) 29-45-45
Fax.Факс. (+37410) 29-46-13

№ 1/ЗП/4612
"12" 12 2017թ.

«Էլայզեռ» ՍՊԸ (ՀՎՀՀ 00458742) տնօրեն
Է. Խաչատրյանին
հասցե՝ ք.Երևան, Մ.Խորենացի 85
էլ. հասցե՝ edo444@mail.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլայզեռ» ՍՊԸ միջև 09.02.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/8-1 գնման պայմանագրին կից 30.03.2017թ. կնքված թիվ 1 համաձայնագրի և 07.04.2017թ. կնքված թիվ 1 փոփոխության շրջանակներում Ձեր ընկերությունը 2017թ. ընթացքում էականորեն խախտել է սերուցքային կարագի մատակարարման ժամկետները:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 3.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. դեկտեմբերի 11-ին միակողմանի մասնակի լուծել է 09.02.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/8-1 գնման պայմանագիրը և դրան կից 07.04.2017թ. կնքված թիվ 1 փոփոխությունը և 30.03.2017թ. կնքված թիվ 1 համաձայնագիրը՝ հուլիս ամսվա խմբաքանակից 19 960 կգ մասով և օգոստոս-նոյեմբեր ամիսների ամբողջ՝ 97 072 կգ խմբաքանակի մասով:

Տեղեկացնում եմ, որ «Էլայզեռ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին փոխանցել 38 421 000 (երեսունութ միլիոն չորս հարյուր քսամնեկ հազար) ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի ընդհանուր գումարի 10 %-ը), ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 3 156 760 (երեք միլիոն հարյուր հիսունվեց հազար յոթ հարյուր վաթսուն) ՀՀ դրամը որպես տույժ (պայմանագրի 7.2 կետի համաձայն) ինչպես նաև վերոնշյալ ժամկետում հետ վերադարձնել 07.04.2017թ. կնքված թիվ 1 փոփոխությամբ տրամադրված կանխավճարի մնացորդը, որը կազմում է 103 897 600 (մեկ հարյուր երեք միլիոն ութ հարյուր իննսունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամը ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի 900011144079 հաշվեհամարին:

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ